

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 դր.
վեցամսեայ 6 դր.


ԱՐՇԱՍԱՀԱՐԱՆ

Ձ. քիւ մէ ծրարով
Տարեկան 14
վեցամսեայ 7 դր.

ԱՄՐՈՒՄ

Տարեկան 2.60 տղ.
վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գրութիւնք եւ
յեւ տրուի

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

„Iravounk“

V A R N A (Bulgarie)

Редакция
на ВѢСТНИКЪ
„Иравункъ“

ВАРНА (България)

Ծանոցման տողը
20 սանթիմ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Մեր յարգոյ յաւանորդները
քոյ յարեւաձիւն յիշել քե ինչպէս
ամեն բարեբերոյն նոյնպէս եւ «իւրա
ռանք» ի յաւանորդներ կանխիկ է եւ
ներկայ տարեշրջանի երրորդ ա
միսը կը լրանայ :

ԵՐՈՊԱՅԻ

ԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԻՒՆԸ

Արտասահմանի մէջ քիչ մ'աւել
ի ընդարձակ կրնանք բացատրել
այս թեմին կարեւորութիւնը :

Հաստատուած Արեւմտեայ գըլ
խաւոր կեդրոններն հաստատուած,
հայկական պատուարներ գիւրք ու
պատիւ ունեցող և նիւթականին
քով բարոյական նախաձեռնի ուժի
մը տիրացած ընտրեալ գաղթա-
կանութիւն մը հովուելու կ'ուզար
վեհափառէն ընտրուած Առաջնոր
դը :

«Ծայրագոյն մը», «անունով ծա
նօթ, Էրզրումի, Եգիպտոսի կա
րեւոր թեմերուն առաջնորդ ըն
տրուած ժամանակաւ, արժանի է
ընդհանուր Եւրոպայի չորս կողմը
ցրուուած կարեւոր գաղթակա
նութեան Առաջնորդ նշանակուելու
անոր ամենազօր մականը, մոգիչ
ու հրաշագործ, կարող է ի մի
հաւաքել այդքան տարտղուած
կարեւոր ուժ մը :

Վեհափառը վճռական որոշումը
կուտար, որովհետեւ իւթիւնեան
Ծայրագոյնը Պատրիարքական
փոխնորդի կարեւոր պաշտօնն
ալ վարած էր :

Հարկ չկար միառմի «ընդ հով
ութեան» գրուելիք ազգայնաց
հաճութիւնն ստանալ կանխաւ
իւթիւնեան գերապատիւր իր բազ
մահմուտ, փորձառու, անվիճելի
տաղանդովը երբեք տեղի պիտի
չտար այդ հարցականին :

Մարտէլը, որ ծայրագոյնի փի
լոնին տակ ճանչցած էր զինք,
չլացաւ եպիսկոպոսի մատանիէն,
առաջին անգամ ձայն բարձրա
ցուց, և լռեց այն միակ յոյսով
որ թերեւս իրականացնէր, և կա
տարէր խղճի մտօք իր վրայ ծան :

բացած նուիրական պարտականու
թիւնները :

Հայրիկի անստոյգիւս համար և
ապագային յոյսը լռել տուին
մեզ այն ատեն, ու անկէ վերջ
տարիներ անցան բան մ'ալ չգրե
ցինք :

Էջմիածինէն եկաւ չեկաւ, նոր
եռանդով խոստումներ ըրաւ, ժա
մանակ չկորսնցուցած այցելեց հե
տգհետէ Բարիդ, Լօնտոն, Ման
չէթըր, Վիէննա եւայլն. անցաւ
Ռուսիայի, ուսկից թրքամուքա
ղաքականութիւնը զինք դուրս ը
րաւ. սրտի մորմոքով փրագար
ձաւ իր վիճակն զայն զրկուած
տեսնելով իր հոգեշունչ խրատա
կաններէն. ու յետոյ այդ այցել
լուծիւններով ուսումնասիրեց ազ
ուոր մը իր ոչխարները — քանի
որ ինք հովիւ էր — և հաստատ
ուեցաւ Մարտէլի մէջ, ուր իր
ժողովարար ազգական իւթիւնեան
Տէր Սահակ հայրն ալ վախճանե
ցաւ :

Իր յարմար օգին, գաղջ կլիմա
ին հետ գաղջակ վայելքներ ալ
ունի Մարտէլը :

Եկաւ հաստատուեցաւ. «միտէ
ր»ը տաքացւց. ճշմարիտ էթէ խօ
սող չըլլայ պիտի մնայ մինչեւ
վերջ :

Տարին անցաւ հոս է հակա
ռակ Մարտէլի գաղթականութեան
լանքերուն քահանայ մ'ալ չի գըտ
նուեցաւ, յարմար քահանայ մը,
իր հովուին հնազանդ հօտը, ընդ
հանուր Եւրոպայի հայ գաղթա
կանութիւնը, իր ազգային գործն
ըը կը վարէ այնպէս, ինչպէս կը
կառավարէր իւթիւնեանէն առաջ :

Բոլորովին անպէտ, աւելորդ չէ՞
այս հովուութիւնը. եթէ հայ ե
պիսկոպոսի տարազով պիտի չը
չլլի հայ թեմերը, ու բարձր հե
ղինակութիւնով մը խօսի, սրտե
րը շարժէ հայ զարգացած մեծա
տունին, և անոնք արդէն տալու
վայ ժուած, սրտայոյզ խօսքերու
տպաւորութեանց տակ հինգ տասը
աւելի կը ձգեն հայ որբի բազմա
կարօտ գանձանակին մէջ :

Եթէ մօտիկ յարաբերութիւններ
չը հաստատէ հայասէր օտարական
ներու ընտրուած դասակարգին

հետ, լրագրապետին հետ են. են.
եթէ ամենուրեք պիտի չխօսի Հա
յու այժմեայ կացութեան, որբի
խեղճութեան վրայ :

Եթէ չմօտենայ հաւատքով օ
տար բարեպաշտներու, բարեպաշ
տութիւններու. ատենք ազգութիւն
չեն խտրեր. նոյնան կարօտներու
համար, ըլլայ Հայ կամ Գաղղիա
ցի :

Եթէ չի մտնի սիրտ ու գուլթ
ունեցող կոմսուհին տունը, նէ
հանրածանօթ նուիրատուն է, որ
մէ միայն Յիսուսեան կրօնաւորնե
րն օգտուիլ գիտեն :

Ահա՞ գաղտնիք Յիսուսեաննե
րու լեռնացած հարստութեան, քի
թեմին հոտ կառնէ թէ, ս'ը
կոմսուհի մը, բրէնսէս մը այրիա
ցաւ անգաւակ, բուռն բուռն
կը նուիրէ իրեն գիւմարներուն :

Պատրիարքարանի պաշտօնական
կոչին, կամ վեհափառ գրգուծին
վրայ ձեռնարկեց հայ որբին հա
մար հանգանակութիւն մ'ընելու,
և պաշտօնեայ քահանաներուն հը
րամայեց նոյնն ընել :

Գումար մը ձեռք բերին. «ախ
պա՛ր, մարդ չի կայ որ» ըսել ըս
կաւ ձեռները չփելով :

Չոր ո՛ր յուզող խօսքերուն, ո՛ր
յաճախումներուն տար պահան
ջուածէն աւելի :

Բոլորովին անպէտ, աւելորդ չէ՞
այս հովուութիւնը. եթէ Հայաս
տանի անունով, խեղճ որբին ա
նունով չձեռնարկել Գաղղիոյ, Ան
գլիոյ, Աւստրիոյ ալաւտ քաղաք
ներու մէջ թատկերական ներկայա
ցումներ, նուագի և պարի հան
դէսներ կազմակերպելու օգտակար
փորձն ընել :

Ինչո՞ւ մոռնանք վոտմիլի ցերե
կոյթը, հայու սիրտ ունեցող ե
րիտասարդի մը աննկուն ճգնաց
արդիւնք :

Կաբելի է այս ամենը ընել.
խնդիրը արդիւնքի քիչ կամ չա
տուութեանը վրայ չէ, կարժէ ձեռ
նարկել և նպատակը ամեն քննա
դատութեան վեր է :

Եթէ ատենք մարդը չէ, — որով
հետեւ ըսեմ թէ Գաղղիներէն խօ
սիլ չգիտեր Եւրոպայի ընդհանուր
հովիւը և թարգման մ'ունենալ չի
ներիր Լիբանանեան հպարտութիւ

նը, գոնէ, ինչո՞ւ սա խեղճ Տաճ
կաստանէն Ամերիկա գաղթողնե
րու մէջ չի մտնի ու դարձան մը
չտանիք անոնց խղճալի կացու
թեան :

Միայն անգամ մը ոտիպումի
տակ կերթայ խեղճ գաղթողներու
իջած օթէլը, աղտոտ միքրոպնե
րու ապաստանարանը, ու սիլինգը
շաքօլայով կը տնկուի բակը. կը
խռնուին շուրջը. եպիսկոպոսին
սիրտը կը խռնուի, յանկարծ ու
չադրութիւնը կը դարձնէ հոն ամ
բարտաւան կեցութեան մը. ֆէ
սով Տաճկաստանցի մը, ձեռքը ե
տին բռնած, ապուշ ապուշ մօ
րութեան երեսը կը դիտէ. «ձօ»,
որո՞ւն առջեւ կեցեր ես կ'ըսէ
ուսին գարնելով, գիմացը կեցողը
եպիսկոպոս է ինչ է» խրատական
ները կը լմցնէ դուրս կրնայ :

Այո՛, աղտոտ են այդ ճամբորդ
ները, անկիրթ են, օթէլին պա
տերը մաքուր չեն, թերեւս բալ
թօյիդ թեւն ու բէշը անպզու
թիւնով տեղ մը քսուին. Բայց ե
պիսկոպոս, կաթողիկոս անունը
կրող Չոր նախնիքը, ուրկանցնե
րու մէջ վերքեր կը լուային իրենց
ձեռքով, անոնց հետ սեղանի կը
նստեն :

Հայ քահանան՝ եպիսկոպոսին,
եպիսկոպոսը՝ կաթողիկոսին, կա
թողիկոսը՝ Սինօգիին և ազգին
պարտաւոր է իր գործերուն հաշի
ւը տալ. Որո՞նք են մեր առաջնոր
դին գործառնութիւնները :

Հ. Ա.

13 մարտ 1901 Մարտէլ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՄԵՈՑ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՁ

Տ. ԲԱՐԿԵՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԻՆ

Պիթիւս վիւայէթի Մուչի նա
հանգը որուն մասը կը կազմէ Սա

(*) Թոյ Արմենիայի վերջին թիւէն
թարգմանելով կարտատպէնք սոյն տե
ղակագիրը, զոր Մշոյ Առաջնորդ Տ.
Բարկէն վարդապետ Պատրիարքարան
ըրկած էր, եւ այդ պատճառաւ թուրք
կառավարութիւնը զինքը յանցաւոր
նկատելով, ընդ հսկողութեամբ Կ.
Պօլիս բերաւ, ուր ազգու միջամտու
թեանց չնորհիւ հազիւ ազատ ձգուե
ցաւ :

սուն գաւառակը, զեղծումներու, կեղեքումներու ու ոճիրներու թաւորը եղած է: Այս հարստահարութիւնները ի գործ կը դրոյին զանազան կերպերով ու կամայական ցնեն դրութիւն մը հայ տարրը բնաջնջելու: Բնա համառոտութիւնը:

Ա. Երկրագործական գրամատան ձեռնարկութեանը գիմով հայ հողագործները, մեծ դժուարութեամբ փոխառութիւն կընեն: անշան գումարի մը փոխարէն գրաւ կը դնեն մեծարժէք ստացուածքներ ու արտեր: ու պայմանաժամուն, այնքան կը քայքայուին որ ստիպուած են կամ արտերը գրամատան թողուլ, կամ չնչին գնով մը զանոնք թուրքերուն ծախել: զոր օրինակ, 10,000 զըշարժող ստացուածք մը կը ծախուի 1500 կամ 2000 զըշ:

Բ. Օրէնքի մը համեմատ, մէն մի արու անհատ պարտի տարին կամ 12 զըշ: վճարել, կամ չորս օր ճամբաներու շինութեանց աշխատիլ: բայց հակառակ այս օրէնքին, թէ դրամը կը պահանջեն, թէ գիւղացիները կաշխատցնեն: օրինակի համար, 100 գործաւոր տալու պարտաւոր գիւղ մը միայն թէ 1200 զըշ: կը վճարէ թէ բռնութեամբ աշխատելու կը տարուի, օրէնքով հաստատուած ժամանակէն ալ աւելի: Ասկէ դատ, գործաւորներու իրական թիւն ալ կամայականօրէն կաւելցնեն ու այս սխալ հաշուով տուրք կը պահանջեն, որով յաւելուածական գումար մ'ալ կը վճարուի: Նոյնպէս, հաւառակ օրէնքին, գիւղացիներու սայլերը կը գրաւեն, օրերով բանեցնելու համար: 20 հատ սայլ ունեցող գիւղէ մը 40 սայլ կը պահանջեն ու այս պատճառով պէտք

կըլլայ կաշառք կերցնել: սայլերու լծուած անասունները անօթութեան ու ծանր աշխատանքի չը դիմանալով, կը սատկին: գիւղացիները կը գանակոծեն, անօթի կը ձգեն ու որովհետեւ աշխատութիւնները վարուցանքին, այսինքն գարնան կը կատարուին, հողագործութիւնը կընդհատուի:

Գ. Այս տարի Մուշի վալին, այս վայրագ գրութեամբ, հայերուն շինել տուաւ, կառավարութեան հաշուոյն, երեք մեծ շէնքեր, շինութեան հարկաւոր պէտքերը, գործաւորներու օրականը ու միւս ծախքերը հայթայթուեցան հայ գիւղացիներէն, ոչ միայն մարդիկ, սայլերը ու անասունները բանելու ստիպուեցան, այլ նաեւ գերաններ շինելու համար գիւղացիներու ծառերն ալ կտրեցին:

Դ. Ահա այս կերպով հաճի Շէրֆի մզկիթի շինութեանը ձեռնարկուեցաւ ու հայ գիւղացիներն են որ կաշխատին, մինչ Օգոստոս փառ Սուլթանը (այս չէ) շինութեան հարկաւոր դրամը տուած էր:

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Բարիկ 15 մարտ

Մեր անցեալ թղթակցութեանց միոյն մէջ յայտարարած էինք թէ Բարիկի հայոց բարեգործական ընկերութիւնը երեկոյթ-Պարահանդէս մը տալու է ներկայ ամսոյ 23 ին: Այդ երեկոյթը տեղի ունեցաւ շաբաթ երեկոյ (Մարտ 23 ին): Պարիկի ամենաշքեղ սրահ, ներքէն «Սալ տէզ Էնթէնիէօր սիվիլ» մէջ: Սրահին ընդարձակ դահլիճը, նախասրահը, մուտքը զարդարուած էին գորգերով ու տուխ:

Կերով ու ծաղիկներով: պատերը և գետինը ծածկուած էին արեւելեան հիանալի գորգերով, զորս հոն տեղափոխած և զետեղած էին Գէշիկեան և Ճէվահիրեան վաճառատուներէն: Սրահը այսպէս լաւ և արեւելեան այնպիսի նուրբ ճաշակով մը զարդարուած էր, որ տեղւոյն սովորական յաճախորդները ապշած կը բացագոչէին թէ բնա այդպիսի շքեղութիւն մը տեսած չէին նոյն սրահին մէջ, ուր սակայն շատ շքեղ երեկոյթներ տրուած են և միշտ կը տրուին:

Երեկոյեան ժամը 8 ու կէսէն սկսած խուռն բազմութիւն մը հաւաքուիլ սկսաւ ընդարձակ դահլիճին մէջ, ժամը մօտ 10 ին արդէն սրահը լեցուած էր: Իսկ 10՝ պէսին այլևս նստելու տեղ չկար բառին բուն նշանակութեամբ: Ստիպուած եղան աթոռներ զետեղել դռներու, անցքերու և անկիւններու մէջ: Բայց բազմութիւնը երթալով կ'աճէր ի խնդութիւն կազմակերպիչ մասնախմբին հրաւիրեալները խմբերով կուգային:

Ժամը 6 կէսին երեկոյթը սկսաւ և տեղեց մօտաւորապէս 3 ժամ: Լսուեցան յայտնի արդիագներ, որոց մէջէն յիշեցր Պ. Միւնէ-Սիւլի Ֆրանսական թատրոնէն, Պ. Ռաֆօ Օտէնէն, Տիկին Վէպէն Նոյնպէս Օտէն թատրոնէն:

Այնտեղ լսուեցան նաեւ երեք հայ արդիագներ ալ: որոնք էին Պ. Պ. Ամիրեան, Երգիչ, որուն վրայ մենք արդէն քանի մը անգամ խօսած ենք, Էլմաս դաշնակահար և Կիւլպէնկ՝ ողբերգակ: Այնտեղ է ըսել թէ ամենքն ալ կատարեալ յաջողութիւն ունեցան իրենց դերին մէջ:

Վերջապէս կոնցերտի մասը որ 16 կտորներէ կը բաղկանար վեր:

Շացաւ կէս գիշերէն կէս ժամ անցած: Այնպիսի յետոյ սկսաւ պարահանդէսը տասներկու նուագաձուներու առաջնորդութեամբ և տեղեց մինչեւ առաւօտեան ժամը 5ր: Պարողներու մէջ մեծ ոգևորութիւն մը կը տիրէր մինչեւ վերջին վայրկեանը:

Բաւական լաւ գումար մը հասոյթն եղաւ այս երեկոյթին: այն պէս կը կարծենք թէ բոլոր ծախքերը դուրս հանելէն յետոյ առնուազն 1500 Ֆր: շահ մը կը մնայ Բարեգործական ընկերութեան: Երանի թէ մեր կարծածէն շատ աւելի լինի հասոյթը, որովհետեւ Բարիկի այդ միակ կանգուն ընկերութիւնը շատ պէտք ունի դրամի իրենց գիմով հարկաւոր արքայապետ հայերուն օգնութեան գալու համար:

Քանի մը օրերէ ի վեր ամբողջ Ֆրանսայի Ժողովուրդը անհատապէս հաշուելով (նոյն իսկ օտարականներն ու անցորդներն ալ) ընդունեցան տպագրուած թուղթ մը որուն վրայ զանազան հարցումներ կային, որոց պէտք էր պատասխանել մարտի 23 էն 24 ի երեկոյեան: Հարցումներու զլիաւորներն էին, անունը ի՞նչ է, ազգականդ, քանի տարեկան ես, ամուսնացած ես թէ ամուրի, գործդ ի՞նչ է, քանի զաւակ ունիս, ո՞ւր ես ծընած, Ֆրանսացի ես թէ օտարական, ո՞ւր կը բնակիս:

Մէկ գիշերուան մէջ ամբողջ Ֆրանսացի Ժողովուրդը, այսինքն Ֆրանսայի մէջ ներկայ եղողները լեցուցին այդ հարցումներով լեցուն թուղթը: Երեկ երեկոյ (կիրակէ) մասնաւոր մարդիկ յիշեալ թղթի հաւաքեցին և յանձնեցին մար:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՅՐ [58]

(ՄԱՍԿԵՐ ՄԸ ՏԱՀԱՆԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱՆ ԿԵԱՆՔԵՆ)

Այսպէս, մինչ Մանուէլ Պոլսոյ մէջ յեղափոխական առաջին շրջանին գործն դեր մը ստանձնելով ամենէն ծանր որոշումը, Ս. գործին համար, սիրով կատարելով, իր վեհօգի օրինակներով իր գաղափարակիցներն ու մտերիները ա'տ անեղ ստապարէզին մէջ կը քաջալերէր, անգին, Հայրենիքի հոգին վրայ, իր ծննդավայրի մէջ, ինքնաճանաչութեան ու ինքնապաշտպանութեան գործնականութիւնը տարածելով՝ գրական յեղափոխութեան խրատացումը՝ Գուրգէն ինքն: իր անձի վրայ կը մարմնացնէր:

ԾԴ

Գուրգէն բանտարկուելէ ու քստորուելէ ետք ալ, չէր դադարած մէկ երկու անգամ գաղտնի միջոցներով թղթակցել Մանուէլի հետ: Վերջի անգամ Կ. Պօլսէն Զօլախ չալու չի հասցէով Մանուէլի կողմէ գրուած հետեւեալ նամակը, կոյս վիճակի մէջ, կըստանայ Գուրգէն:

«Մերեկի Գուրգէն»
«Վերջին գրութիւնդ, քստորավայրէջ գրուած, ստացայ: Կարգացի զայն սրախ տարօրինակ սեղմումով մը ու լացի:
«Զորս իրիկուն է որ, սենեակիս մէջ ստանձին,

գրասեղանիս առջեւ նստած, նուիրական իրի մը պէս գրութիւնդ ձեռքս կառնեմ ու քանի մը անգամներ կը կարդամ զայն: Որքան ես շարունակեմ լուռ ու մուռ ընթերցումս, ա'յնքան կ'զգիլիս յուզումս: Երբեք ինքզինքիս աէր չիմ: չիմ գիտեր թէ այն վայրկեաններուն ինչե'ր կը դառնան ուղեղիս մէջ, շատ անգամ անէպաճ մտքով կը կրկնեմ ընթերցումս աս պաշտելի թղթի կտորին, որ ձեր մասնակցով բանտի խորերէն գրուած է: Այս թղթիկի խշտոցի հետ, ձեր ոտքերը պրկող ու ձեր ձեռքերը կաշկանդող վայրագ թիւրքի կուռ շըղթաներու զոհսային ձայնը կարծես կ'զգամ ներքստապէս:

«Ձեր առաձարկութիւնը շատ սիրով կ'ընդունիմ, կ'երգնում ձեր շղթաներուն վրայ, մէկ ամիսէն ետք ձգել Պոլսն ու իմ բոլոր երազածները, պարզ շինականի մը պէս, երթալ Սալնաթ, ձեր գ'ւղն: ու ձեր յանձնարարական նամակով շարունակել այն գործը, զոր դուք ազնիւ Տէր Վահանի հետ սկսած էք:

«Ախ, եղբայր, բանտի խորերէն ձեզ ձայնը իր ամենէն անուշ ու ամենէն ցնցիչ չնչտեղով կ'եղբորականացնէ: Ալ չեմ գիտեր թէ, ե'րբ պիտի հեռանամ այս բազմաթիւ քաղաքէն, որ, ձեր գրութիւնը ստանալէս ի վեր տարօրինապէս փոխուած է աչքիս, ու երթալ հոն, հայրենի ծոց, ձեր սրտի ու մտքին մօտիկ բնադաւաճի մէկ խոր շին մէջ, եղբոր մը հիմ գրած կարեւոր գործը վերակսելու:

«Ալ ամեն բան վերջացած է հոս ինծի համար: Ինքզինքս միշտ անտեղ ձեզ գ'ւղի մէջ, ձեր նուիրարգրած գրախտավայրերու ու եղեմակուն տղերքներու շուրջ, ձեր սիրելի սաներու ու սանու:

հիներու խումբին հետ կը կարծեմ: Մնա'ք բարով եղբայրս: ձեր յանձնարարածի պէս պիտի գործեմ ու վերաբերուիմ դէպի ա'ն ամեն խնդիրները, որոնք գիւղի համայնքի նիւթական ու բարոյական օգտին կը ծառայեն: ու Հայրենիքի ապագայ վերածնութեան գործին կը սատարեն: Հանդարտ սրտով համակերպեցէք ճակատագրի ու յեղափոխականի մը յատուկ հերոսութիւնով՝ ցոյց տուէք որ՝ գաղափարի առեւծ մըն էք: Կրնաք վստահ լալ որ, ձեր եղբայրը իր երգումը գործող մը չէ:

«Տէր Վահանի քաջ ա'ջն ու ձեր ճակատը կը համբուրեմ:»

Ձերդ՝ ՄԱՆՈՒԷԼ

Մայիս ամսու ոկիգներն էր, երբ ստացաւ Մանուէլ Գուրգէնի նամակը ու գրեց անոր պատասխանը: Յուլիս 15 ին իր բոլոր գործերը կարգադրելով գիւղացի հայր մը պարզ զգեստներով ու անցագրով կը մեկնի Պոլսն: 25 օր վերջ, անշան գիւղացիի մը պէս Պիթիս կը մտնէ: Փ. գիւղի ճամբան կը սովոր: ու ուղեկցի մը հետ Գուրգէնի սիրական ծննդավայր կը գիւղէ, ինչպէս տեսնուեցաւ նախորդ զուրկներու մէջ:

ԾԵ

Մանուէլ Մամիկոնեան փ. գիւղի վարժապետական պաշտօնը ստանձնելուն պէս կը հաւաքէ զբարոցի ցրուած սաներն ու սանուհիները: Գուրգէնի զծած ծրագրին համաձայն կը վարէ նոյն վարժարանը:

Սիրաբեան Սահակն ու իր ընկերները կը խորհրդակցեն ա'տ ազնիւ երիտասարդի շուրջ: ու իրենց անկեղծ գործակցութիւնով կը զիւրացնեն անոր ամենակարեւոր գործը:

մարդահամարի լանձնախմբին: Այդ միջոցառումը թղթերը մեկիկ մեկիկ պիտի կտրվեցուն և դասավորուեն: Բանակ մը մարդիկ այդ գործով պիտի զբաղին մարդահամարի կեդրոնատեղ: ոյն մէջ:

Իսկ մարդահամարին հետեանքը պիտի իմանանք յառաջիկայ տարի, եթէ Աստուած տայ:

Բարիքի մէջ լուր տարածուած է թէ մի քանի անգամներ հանգուցեալ Միլան թագաւորը քանի մը անգամ Բարիքէն փոխած է իւր պարտատէրէրու ձեռքէն ազատելու համար: Մընուի այնպէս թէ իշխելու գահազուրկ թագաւորը ուզած է իւր թագը գրաւ դնել փող ունենալու համար: Բայց այդ թագին համար մեծ գումար մը չպիտի կրնար ստանալ, որովհետեւ նա ոչ ոսկիէ էր և ոչ ալ արծաթէ ալ պարպապէս պրօնզէ: Այդ մէտադը փլէջելու պատերազմէն յափշտակուած թնդանօթէ մը առնուած էր: Ընդհակառակը Ուելիհէլ միսա փոքրիկ թագուհին իր սիրուն գլուխը կրնայ դնել Շարպական ամենաթանկագին թագը: Կըսուի թէ այդ թագուհւոյն թագը երեսուն միլիոն ֆրանքէն աւելի կարծէ: Սակայն Ասիական մի քանի վեհապետներու թագերը այդ գումարէն աւելի կարծեն եղեր: Ի միջի այլոց կը յիշուի Հնդկաստանի իշխանագունի մը թագը, որ երեսուն և հինգ միլիոնէ աւելի կարծէ: այս պարագային կ'արծէ որ մարդ թագի մ'իտեւէն վազէ:

Ս. Դ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Նանսիի մէջ՝ Տօք Արթիւնեան

Ֆրանսերէն լեզուով տետրակ մը հրապարակ հանած է, «Իւէ-րֆ դարու Հայոց վաճառականութիւնը» անունով: Հեղինակը իր այդ աշխատութեան մէջ հայոց մասնորական շարժման վրայ կը խօսի:

— Բարիքաբնակ հայազգի ծանօթ բժիշկ Տր. Քօլօլիան «Մտալին ուղղային հիւանդութեանց ախտաբուժութիւնը» անունով քստուար հատոր մը հրատարակած է:

Տր. Քօլօլիան իր գրքին ձեռագիրը ներկայացուցած է Բարիքի Բժշկական ակադեմիային, որ անցեալ տարուան Պարարժէի մրցանակը (600 ֆր.) տուած է իրեն:

— Ռուս Հանրային կրթութեան նախարարութիւնը 1898ին Հայոց դպրոցները գրաւած պահուն իւրացուցած էր նաև կարգ մալ եկեղեցապատկան կալուածներ: Այն կից ի վեր է որ հայ եկեղեցական վարչութիւնները դատարանի դիմելով ետ կը պահանջէին այդ կալուածները, որոնցմէ մաս մը դատական վճիռներով յաջողած էին վերստանալ: Այժմ ալ կիմացուի թէ հայոց կրօնական օտեանը դիմած է Թիֆլիսի նահանգային դատարանը, որ վճռած է Հայոց եկեղեցիին վերադարձնել 1. Զաքարիայ քաղաքը գտնուող անշարժ կալուածը: 2. Թիֆլիսի նահանգին Բէլի կիւիշ (Աղբուրազ) տեղը գտնուող եռաշարկ քարաշէն տունը և անոր քով գտնուող շինութիւնները որոնք արքունական հողի վրայ շինուած են: 3. Թիֆլիսի նորայէն Ու. Աստուածածին եկեղեցիին բակը գտնուող երկյարկի շէնքը:

Ասոնցմէ զատ կրթական նախարարութիւնը դատապարտուել է նաև

եւ վճարել դատական ամբողջ ծախքը:

— «Բրօ Արմենիայ»ի վերջին թիւին մեջ հրատարակուած նամակի մը համաձայն, Թուրք կառավարութիւնը սկսած է Ատանայի մէջ նոր հալածանքներ հանել Հայոց դէմ և թէ ասոնցմէ օրը 30—35 հոգի կը ձերբակալէ և յանրաւի դրամ կը պահանջէ: ամեն անոնք որ չեն կրնար տալ, կահ կարասիին կը յափշտակուի եւ շատ վար գնելով կը ծախուի:

Յիշեալ թիւի մը կաւելցնէ թէ կեղեքման այս տեսակն ալ ըս. կստում է ի գործ դրուել, հայթայթելու համար այն դրամը որ պիտի տրուի Ռուսիոյ իւր մասնաժողովար պատերազմական տուգանքի:

— Կրկին նոյն թիւի մը առած տեղեկութեանց համաձայն, քսանի չափ հայ ընտանիքներ Տիգրա նակերտէն և Կարնոյ շրջակայէն, բէն չքաւորութեան առթիւ գաղթած են դէպի Ատանա ասոնցմէ մէկ մասն ալ կը մեկնին դէպի Իսկէնտէրուլ, ուր կառավարութիւնը այդ խեղճ ընտանիքներուն այդ մարդիկը ձերբակալելով կ'աքսորէ Հալէպ և կիներն ու տղաքներն ալ կրկին Ատանա կը շրջէ: Հիմա այս խեղճերը, կին, տղայ, Ատանայի մէջ խեղճ ու անօգ կը պտտին և հանրային ողորմութեամբ կապրին:

— Պատրիարքարանը նամակով մը իմացուցած է Սիւ թէ, Սահակ եպս. Խաչայեան Զատիկ տօներէն վերջը կրկին Սիւ պիտի երթայ վերջնականապէս լմնցնելու համար: Կաթողիկոսական խնդիրը:

— Ի նպաստ Պոլսոյ Ազգային Հիւանդանոցի կազմակերպուած նուա.

գահանդէսի հասոյթը 1000 ոսկի եղած է:

— Գաւառական որբանոցներու և նպաստընկալ վարժարաններու Մարտի և Ապրիլի ամսականները Պատրիարքարանէ խրկուած են:

— Քէօթահեօյի Առաջն. Տեղապահ Տ. Մկրտիչ վարդապետ Աղաւնունի, իր վիճակին մէջ կատարուած կանխահաս ամուսնութիւնները արգիւելու և անկից առաջ եկած կարգ մը գծարդութեանց ու հիւանդութիւններու վերջ մը գնելու մտօք, կանոն մը խմբագրելով վաւերացման համար Պատրիարքարան խըրկած է: Այս օրէնքով 15 տարեկանէ վար աղջիկներու և 20 տարեկանէ պակաս տղաքներու ամուսնութեան հրաման չի պիտի տրուի:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ալմանդէնի սնդիկի հանքերուն մէջ ծառայող գործաւորի մը կինը տասը ամիս ուռալ ծնած էր արդէն երեք երեխայ: անդիւ շաբթու ալ հինգը մէկէն ծնու եւ զարմանալին այն է որ հինգն ալ շատ լաւ առողջ վիճակի մէջ են:

Ալ տակէ վերջ ինչպէ՞ս կարելի է ըսիլ թէ Ֆրանսոյի ժողովուրդը չաճիր, քանի որ կիները սկսած են երեք, հինգ երախայ մէկէն աշխարհ բերել:

— Ճարտնի մէջ նշանաւոր հանգիստացող դերասաններուն և դերասանուհիներուն փոխան ծագկեփուն շի սովորութիւն է եղեր իւզաներկ պատկերներով զարդարուած թատերական վարագոյրներ նուիրել որոնք ի հարկին բարձր գիններով ալ կը ծախսուին:



Այն պարզ պիւղաջիները, որոնք տեղեկութիւն չունենին Մանուէլի ո՞ր անգէն գալուն ու որտեղացի ըլլալու մասին տեսնելով անոր զեղջուկ զգեստներով պարզ ու անշուք կեանքն ու նկատելով արտաքին կարգի ջանքերն ու բարոյական ահագին աշխատութիւնը, կը զարմանային ու շատ անգամ անոր նկատմամբ առասպելական պատմութիւններ կը պատմէին իրարու:

Մանուէլ Մամիկոնեան, իր ուսուցչական պաշտօնի համար գիւղէն ստացած 100 դահկան թողալով, թէ Գուրգէնի հօրեղոր կիւնը, ծերունի Սահակ և անոր քոյր Շուշանիկի բւեր կարիքները կը հոգար, եւ թէ նոյն գիւղի մէջ աչքառու աղքատ այրի Թամամ անուն անտէր ու անտիրական հիւանդ կիւնը, իր երէք որբիկներով կը խնամէր: Իր անձնականին համար, գրեթէ ծախք մը չունէր, իր ուսուցիչը գիւղէն կը հայթայթուէր, հագուստի ու կապուստի համար ալ, կարելու ծախք մը ըլլալու հարկին մէջ չէր: Հասարակ գիւղացիի մը պէս տեղական ապրանքներէ կը պատրաստուէր իր բոլոր հագուստները: Ոտքի թնթեւ կոշիկներէն ըսկելով միշտ գլուխը զրաւ արած խմորէն, ամենքն ալ ան գիւղի մէջ մանուած, գործուած, ձեւուած ու կարուած, տեղական պարզ ու գիւղացուին արտադրութիւններ էին:

Այսպէս, բաւական տամանակ կանցնի Մանուէլի փ. գիւղ մտնելու ու վարժապետական գործը արգիւնաւոր կերպով առաջ տանելու վրայ, օր մալ, Գուրգէնի յետագայ նամակը անսկիւկալ կերպով կը ստանայ:

«Սիւրիլի Մանուէլ»,
«Ք. Պօլսէն ձեր գրած վերջին նամակը, ասորին ձեր ձեռքը հասած է: Զեր այս գրութիւնէն կը տեղեկանայինք որ, զոք իմ ցանկութիւնը կա տարելու համար, Պօլսէն պիտի մէկնէիք, Հայ-

«Երեւի, մեր գիւղը երթալու, իմ ու տէր վահանի «սկսած կիսատ գործը վերսկսելու համար:

«Թէ ձեր աս նամակը, ինչ մեծ միջոցառութիւն ազգեց մեզի նման վշտաւոր աքլորուածներու, «կրնաք երեւակայիլ, երբ գրեմ որ, աս նամակը «ստանալէն ի վեր, ամեն իրիկուն, մեր բանտի «յարգէ չոր խշտեակին վրայ պառկելէ առաջ, անիկայ երկու անգամ կը կարդամ: Ու յետոյ, «մասունքի մը պէս աս թղթիկը, սրտերնու վրայ «տեղադրեցնելէ ետք, երկուքս քով քովի կեկնանք: «չոր փալաւներու վրայ, ու մեր ոտքերը կաշկան «գող պալ շղթաները, իրենց շոխքը իրարու «խառնելով, բանտի աս մութ խորքերէն մեր սիրտն «ու միտքը կը թոցնին գլպի Հայրենիքը, դէպի «մեր տանջուած ազգակիցները, ու մեր փալա- «յած ծրագիրները... ու այս բոլոր մտաւանջ «գործի մեծ մէջ, երբ կը մտածենք որ, դուք, «ձեր խոստով պահելով մեր գիւղը դուք ու ձեր «խեղացի գործառնութեամբ, զօրացուցած էք ան «յուսոյ խարխիւր որ, պիւղացի համայնքի գոյու- «թեան ամենագոյնէ կուսանն է կրթութեան մեր «վիշալ: Այս մասին ձեզի երկար բարակ գրելու «խրատներ տալը սւելորդ է, քանի որ դուք ալ «ինձի նման գիւղի գաւալ ըլլալով, ինձմէ սւելի «աղէկ սերտած էք հայ գիւղացիի կեանքն ու անոր «սխեթական ու բարոյական անհուն պտքերու «անհրաժեշտութիւնը: Համարձակօրէն գործեցէք «ուրիշն, որոն կը ներին ձեր ուժերը...»

«Միջոցէ մը ի վեր, տագնապեցուցիչ հիւանդութեան մը ենթակայ եմ գործել: Որքան որ թրքական անտանիկի բաժնին ու արաբական ան «րեւակայելի տանջանքներուն կարեւորութիւն «տեսողներէն չեմ, բայց կեկեկ որ, ատոնք «ամենը վախ մարմնոյս վրայ կամաց կամաց «իրենց փալաւի ազգեցութիւնը գործելով, առող- «ջութիւնս խակապէս խանդարած եմ:

«Ու կերեւակայեմ որ, գուցէ վերջինը ըլլայ «իմ այս ձեզի գրելիք նամակս: որովհետեւ, որոշ «կը զգամ որ, կեանքը յուշիկ յուշիկ խոյս կուտայ «ինձմէ: Կստարեւապէս երջանիկ եմ, մտածելով «որ իտէալի մը համար կը մեռնիմ, նա յանաւանդ «որ, ձեր ներկայութիւնով տեղս թափուր չէ: «Հայրենիքս ու ազգակիցներս, ձեզմով աւելի «պիտի օգտուին:

«Պաշտելի Տէր վահանը ճշմարիտ Ղեւոնդ մէ «խոշտանգանք, տուայտանք, շղթան ու զնգան, «ամենեւին չեն կրցած ազգիկ անոր անաղարտ «նկարագրի ու երկաթէ կամքի վրայ: Այն բարի, «ազնիւ ու գաղափարական վեհանձն Բահանն է «ինչ որ էր առաջ, ու ինչպէս նամակներովս եր- «բեմն կը նկարագրէի զայն ձեզի: Այս հազուա- «գիտ մարդու հոգեկան կարողութիւններն ու ի- «տէալական բարձր մտածունքները աղէկ հասկնալու «ու վերլուծելու համար, պէսք է որ, ինձի նման «մէկը, երկար տարիներով անոր բանտակից ու «չղթայակից ըլլալու երջանկութիւնն ունենայ...»

«Այսօր վերջապէս Տէր վահան, խոստովանեցուց «ղիս, ու իմ գրական սկիպարի փիլիսոփայութեան խախտ տարբարակը, ահագին ստանալու յոյս մը «ման՝ ան գերագոյն վայրկեանին, հալեցան անոր «ամենէն անուշ ու հէգեբուն միտքի գորովին առ «ջեւ որ, այնքան ջիւղմունանդ ու անձնադիր հօր «մը անպատմելի զթաւարութիւնով, թողութիւն «իւ խնդրէի իմ մեծ ու պղախ յանցանքներու հա- «մար: Կերեւի որ, իմ արտակից ընկերս ալ հառ- «կցած է որ, քիչ քիչ պիտի առկայի կեանքիս «կանթիւր: Երկուքս ալ զրկախառնութեամբ լացինք «սո խորհրդաւոր արարողութեանէն ետք:

«Վերջին ու ջերմ համարներս ձեզի, իմ սիրե- «լի սաներուն ու սանուհիներուն ու մեր բոլոր ըն- «կերներուն, ալ չեմ կրնար շարունակել, աչերս «կը մթապնին ու մատներս կը թուլանան: «Ներքեցէք ինձի: (Շար.)

ԳՈՒՐԳԵՆ

Отговорникъ Н. Драгулевъ
П. „Взаимность“, Варна.